



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«11» 02 2020թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000014

Զեռնարկողը՝

«ՎԳՄ» ՍՊԸ

Երևան, Թբիլիսյան 3/19

Գործունեությունը՝

Արաբկիր վարչական շրջանի Աղոնցի փողոց, 19/8 հասցեում  
բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայք  
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

Առջիր եզրակացությունը՝ 5 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՑՈՒԹՅԱՆ  
թիվ ԲՓ 000014**

<11> 02 2020թ.

**Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնցի փողոց, 19/8  
հասցեում բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայտ**

**Ներածական մաս.**

Ձեռնարկող՝

«ՎԳՄ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ  
/Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի բնակելի թաղամասում: Բնակելի համալիրը նախատեսված է կառուցել ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Ադոնցի փողոց, 19/8 հասցեում՝ հասարակական և արտադրական շենք շինությունների հարևանությամբ: Բնակելի համալիրի կառուցման համար հատկացված հողատարածքը գտնվում է Արաբկիր համայնքի Մ. Տիգրանյան և Ա. Գրիբոյեդով փողոցների միջակայքում՝ 1.72 հա տարածքի վրա, որը սեփականության իրավունքով պատկանում է «ՎԳՄ» ՍՊ ընկերությանը:

**Նկարագրական մաս.** հողամասը կառուցապատված է արտադրական չգործող, խարխով վիճակում գտնվող տարբեր տեսակի շինություններով և պահեստային տարածքներով: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերթօգտագործման և այլ արտադրական նշանակության:

Համալիրը նախատեսված է միասնական՝ ստորգետնյա հարկերով: Համալիրի 7 կետային մասնաշենքերից 4 հատը նախագծվել են մինչև 14 վերգետնյա հարկերով, իսկ Ադոնցի փողոցին հարող երկայնական համալիրի 3 հատ մասնաշենքը նախագծվել է մինչև 20 հարկանի: Բնակելի շենքերի առաջին հարկերը հասարակական նշանակության են: Տարածքում նախատեսված են ստորգետնյա ավտոկայանատեղիներ և վերգետնյա հասարակական նշանակության շինություններ: Արևմուտքից արևելք այս մասնաշենքերը նախագծվել են աստիճանաձև նահանջ/ հորինվածքով՝ ստորև մասնաշենքի



հարկայնությունը ընդունելով 6 հարկ: Բնակելի հարկերի բարձրությունը հարկից հարկ ընդունվել է 3.30 մետր: Տարածքում նախատեսվում է նաև 1 էլ. ենթակայան:

Բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքի մակերեսը կազմում է 10320.0մ<sup>2</sup>, ներառյալ՝ շինությունների մակերեսներ, սալվածքներ, սպասարկման տարածքներ:

Կառուցապատվող տարածքում, ներքին բակում տեղակայված են յինելու նաև բացօթյա ավտոկայանատեղեր՝ բնակիչների և հյուրերի համար, գրոսայգի, առանձին կանաչապատ տարածքներ և հանգստի գոտիներ, ինչպես նաև՝ թաղամասի սպասարկման համար օժանդակ շինություններ: Հանգստի գոտիները նախատեսված են ակտիվ (ավագածած մանկական խաղահրապարակ, մարզադաշտ, երկու մարզահրապարակ) և պասիվ (2 գրուցարաններ) հանգստի համար:

Բնակելի հարկերը տիպարային են՝ բաղկացած 4 սենյականց, 3 սենյականց և 2 սենյականց բնակարաններից: Պատվիրատուի առաջարկով որոշ բնակարաններ միավորված են: Շենքերի առաջին հարկերը նախատեսված են հասարակական նշանակության համար: Բոլոր մուտքերը ապահովված են թեքուղիներով:

Վերելակները յուրաքանչյուր շենքում երկուսն են՝ 400 և 1000կգ բեռնաբարձությամբ: Նրանցից 1000կգ-անոցը նախատեսված է հրշեջ ստորաբաժանում տեղափոխելու համար:

Հողամասում առկա են քանդման ենթակա շինություններ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2270.42քմ: Շինությունների քանդման արդյունքում կառաջանա 900իմ ծավալով տարբեր տեսակի շինարարական աղբ և թափոններ, որոնց մի մասը կօգտագործվի շինարարական աշխատանքների համար, իսկ մնացած՝ կհեռացվի համապատասխան աղբավայրեր:

Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի առկա ճանապարհներով, որոնք անցնում են հողամասի երկու կողմերով: Հողամասի արևմտյան սահմանագծու անցնում է գրունտային ճանապարհ, որը կարող է ծառայել որպես երկրորդային սպասարկման ճանապարհ: Գործունեության ենթակա տարածքի հարևանությամբ գտնվուած են հասարակական և արտադրական նշանակության շենք-շինություններ: Հողամասին կից տարածքներով անցնում են գործող ինժեներական ենթակառուցվածքները:

Միջանցքները սարքավորված կլինեն ծխահեռացման համակարգով: Բնակարաններում նախատեսված են ինքնաշխատ ծխային-հրդեհային ազդարարաման սարքեր:

Մեքենաների մուտքը դեպի ստորգետնյա ավտոկայանատեղի նախատեսված է երկկողմանի՝ բաց թեքահարթակներով, լուսացուցային կարգավորումով:

Բնակելի շենքերի դասավորությունը պայմանավորված է հողամասի դիրքով, հեռավորությունների նորմատիվ պահանջներով, բնական լուսավորության հաշվարկներով:

Տանիքը նախատեսված է հարթ-համատեղված՝ ճկուն փաթթոցային ծածկույթով և կազմակերպված ջրահեռացումով:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Կառույցում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ:

Շենքերի սեյսմագինվածության մակարդակը նախատեսված է սեյսմիկ - III գոտու համար (9 Բալ և ավելի):

Բոլոր շինությունների շինարարական աշխատանքներն իրականացնվելու են միաժամանակ: Ըստ նշված բնութագրի, ԱՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով նշված



աշխատանքների իրականացումը /շինարարության տևողություն/ հաշվարկված է 33 ամիս, այդ թվում՝ 1.5 ամիս նախապատրաստական փուլ:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի 40%-ը /մոտ 6880.0 մ<sup>2</sup>/: մնացածը կկազմի կառուցապատումը, ներառյալ՝ սալվածքները, սպասարկման տարածքները, անցուղիների, ճանապարհների և բացօթյա ավտոկայանատեղիների մակերեսները:

Կանաչապատման աշխատանքների համար <<օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատվող տարածք կրերվի բուսահող՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Կանաչապատումը ներառում է սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատուներ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է թույա, կաղնի, գնդածն ակացիա, հացենի, թխկի, լացող ուղենի և այլ ծառատեսակներ, ինչպես նաև՝ ծաղկասածիներ և խոտի սերմ:

Ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցի միջոցով: Ամբողջ հողամասը կունենա ոռոգման ավտոմատ համակարգ: Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում կատարվելու են հետ-քահ էքսկավատորով:

Ապրանքային բետոնը շինհրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ՝ շինհրապարակում:

Շինարարական իրապարակում չի նախատեսվում շինանյութերի կամ սորուն նյութերի պահեստներ:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շիննորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև՝ նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարությունը իրականացվելու է ընկերությանը պատկանող մեքենամեխանիզմներով՝ էքսկավատորներ, ինքնաթափ ավտոմեքենաներ, ավտո և աշտարակային կոռունկներ:

Զրամիացումն իրականացվելու է նախագծված տարածքի հարևանությամբ անցնող ջրագծից: Զրագծի ջրի ճնշումը 1.0մթն., ջրամատակարարումը՝ շուրջօրյա: Զրահեռացման միացման կետը կինի տարածքի հարևանությամբ անցնող d=700մմ տրամագծի գործող կոյուղագիծը: Զրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից:

Շենքերի կոյուղագրերը կիեռացվեն միասնական ինքնահոս համակարգով՝ կանգնակների միջոցով: Սանիտարական սարքերի միացումը կանգնակներին նախատեսվում է իրականացնել թեք ծևավոր մասերով: Կանգնակները մոնտաժվում են հորաններում և պատերի մեջ փակ համակարգով: Արտաքին կոյուղագիծը նախատեսվում է իրականացնել պոլիթիլենե Մ150-200մմ խողովակներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները և շինաղբը Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված տեղափոխվելու են համապատասխան աղբավայրեր:

Շինարարական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:



Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող գործունեության տարածքում Կարմիր գործում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր՝

- շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,

- սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,

- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով,

- տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին,

- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,

- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- խուսափել աղմկահարոց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում,

- շինհրապարակում խուսափել շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

-մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում,

-տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,

-հանված հողային գորունտները պահեստավորվում են թռվլատրված վայրում,

-անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով:

**Պատճառաբանական մաս.** Երևան քաղաքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական



աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կիխնեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չքավարման դեպքում՝ ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

- Կառուցապատման հետագա գործառույթները իրականացնել << օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես՝ << քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի 263-Ն հրամանով հաստատված <<ՃՆ-30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի համաձայն:

### ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՎԳՄ» ՍՊԸ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնցի փողոց, 19/8 հասցեում բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝

Հ. Մեսրոպյան

